

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 30.10.2012թ-ի նիստում քննության է առնվել «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ 12.10.2012թ. թիվ 12-1846 դիմում-գանգատը « ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 03.10.2012թ. թիվ 1002542 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 02.05.2012թ. թիվ 1002542 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող « օրենսդրության առանձին պահանջների ճշտության ստուգում: Արդյունքում 03.10.2012թ-ին կազմվել է թիվ 1002542 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 329.738.295 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերությունը 2010թ-ի շահութահարկի հաշվարկում 27.04.2011թ-ի ստուգման ակտով արձանագրված 2009թ-ի ավել ցույց տրված 45188000 դրամ վնասը նվազեցրել է 2010թ-ի համախառն եկամտից, որպես նախորդ տարիներում առաջացած վնասներ, խախտելով «Շահութահարկի մասին» « օրենքի 7-րդ հոդվածի ժէ) կետի և 25-րդ հոդվածի պահանջները: Հաշվի առնելով նշվածը, 2010թ-ի հարկային վնասը կկազմի 96284000 դրամ, նույն գումարի չափով (45188000) համախառն եկամտից նվազեցվել է նաև 2011թ-ի շահութահարկի հաշվարկում, որի հետևանքով հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել 45188000 դրամի չափով:

Հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» « օրենքի 33-րդ հոդվածի, «Հարկերի մասին» « օրենքի 27-րդ հոդվածի պահանջները լրացուցիչ հարկային պարտավորություն է առաջադրվել ընդամենը 13556400 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ 2011թ-ին ընկերությունը «Կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված շահութահարկի մասին ամփոփ հաշվարկ»-ում չի ներառել ոչ ռեզիդենտի կողմից («Դորոժնիկ» ՍՊԸ ՀՎՀՀ 90071281), որը համաձայն «Շահութահարկի մասին» « օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի դասվում է ոչ ռեզիդենտների շարքին և որի համար հարկվող օբյեկտ է համարվում, համաձայն նույն օրենքի 53-րդ հոդվածի, հայաստանյան աղբյուրներից ստացած շահույթը (եկամուտը)), «-ում իրեն մատուցված ծառայությունների դիմաց նրան վճարած 1495681357 դրամի եկամուտները, որով և խախտել է «Շահութահարկի մասին» « օրենքի 64 և 66-րդ հոդվածների պահանջները (համաձայն «Շահութահարկի մասին» « օրենքի 64-րդ հոդվածի աղբյուրի մոտ շահութահարկի պահումը (գանձումը) իրականացնում է հարկային գործակալը՝ ոչ ռեզիդենտին վճարվող եկամտի ընդհանուր գումարից): Կիրառելով նույն օրենքի 57-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված, եկամտի վճարման աղբյուրի մոտ շահութահարկի պահման դրույթաչափը 10%, պակաս ցույց տրված ոչ ռեզիդենտի շահութահարկը կազմում է 149568136 դրամ:

Ընկերությունը ոչ ռեզիդենտ կազմակերպությանը նշված գումարը վճարել է հետևյալ ժամկետներում՝ 08.03.2011թ. 362099679 դրամ, 12.05.2011թ. 297782350 դրամ, 04.07.2011թ. 192665918 դրամ, 26.08.2011թ. 167840563 դրամ, 18.10.2011թ. 128654679 դրամ, 17.11.2011թ. 194314564 դրամ, 09.12.2011թ. 152323605 դրամ, ընդամենը 1495681357 դրամ:

«Շահութահարկի մասին» « օրենքի 64-րդ հոդվածով սահմանված կարգով պահված շահութահարկի գումարը հարկային գործակալը նույն օրենքի 66-րդ հոդվածի համաձայն, պարտավոր է ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ վճարել պետական բյուջե, որն ընկերության կողմից չի կատարվել, հետևաբար ելնելով նույն օրենքի 69, 70-րդ հոդվածներից, կիրառելի է «Հարկերի մասին» « օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները:

Ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով ենթակա է գանձման ոչ ռեզիդենտի շահութահարկ 149568136 դրամ, տուգանք 89740882 դրամ և ուշացման օրերի տույժ 76250265 դրամ, ընդամենը 315559283 դրամ:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ըստ ներկայացված փաստաթղթերի ստուգմամբ պարզվեց, որ ընկերությունը խախտելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջներն առանց հարկային հաշվի (հաշիվ ապրանքագրով) 2011թ-ի հունվար ամսվա ԱԱՀ-ի հաշվարկով հաշվանցել է 304200 դրամ ԱԱՀ: Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ԱԱՀ-ի գումարը՝ 304200 դրամ, ինչպես նաև տուգանք այդ գումարի 50%-ի չափով 152100 դրամ:

Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի գանձվում է տուգանք 30420 դրամ և համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ տույժ 95894 դրամ:

Ընկերությունը ստուգման ակտի ոչ ռեզիդենտի շահութահարկ բաժնում նշված «Դորոժնիկ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 90071281) կողմից իրեն մատուցված ծառայությունների դիմաց 26.04.2011թ-ի թիվ 051N003241 հատուկ հարկային հաշվի վերաբերյալ գումարով 486532272 դրամ և ԱԱՀ 97306454 դրամ, «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով ((ԱԱՀ վճարող համարվող անձինք հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), ՀՀ կառավարության սահմանած կարգով ներկայացնում են տեղեկանք հաշվետու ժամանակաշրջանում իրենց ձեռք բերած ապրանքների և ստացած ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցած ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ) տեղեկություն չի ներկայացվել: Համաձայն նույն օրենքի 43.1 հոդվածի, ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց վերաբերյալ սույն օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան հարկային մարմին տեղեկություններ (այդ թվում ճշգրտված) չեն ներկայացվել կամ որոնց վերաբերյալ ներկայացված կամ չներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում հարկային հաշվում արտացոլված տվյալներին (վավերապայմաններին) հաշվանցման ենթակա չեն (նշված գումարն ընկերության կողմից չի հաշվանցվել):

«Դորոժնիկ» ՍՊԸ-ի դուրս գրած՝ 13.06.2011թ-ի թիվ 051 N 003249, գումարով 314556439 դրամ և ԱԱՀ 62911288 դրամ, 20.07.2011թ-ի թիվ 051 N 003498 գումարով 260478523 դրամ և ԱԱՀ 52095785 դրամ, 22.09.2011թ-ի թիվ 051 N 003506 գումարով 205595206 դրամ և ԱԱՀ 41119041 դրամ, 26.10.2011թ-ի թիվ 051 N003510 գումարով 255454469 դրամ և ԱԱՀ 51090894 դրամ և 22.11.2011թ-ի թիվ 051 N003688 գումարով 172611968 դրամ և ԱԱՀ 34522394 դրամ հատուկ հարկային հաշիվների վերաբերյալ, ինչպես նաև «ԳՇՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00005417) կողմից դուրս գրված 11.07.2011թ-ի թիվ Ա4279267800 գումարով 10769175դրամ և ԱԱՀ 2153835 դրամ, 20.10.2011թ-ի թիվ Ա1523296936 գումարով 9778483 դրամ և ԱԱՀ 1955697 դրամ հարկային հաշիվների վերաբերյալ «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն, պահանջվող տեղեկությունները ներառվել են 2012թ-ի ապրիլի 12-ին և 13-ին ներկայացված ճշգրտված տեղեկանքներում (նախկինում այդ հարկային հաշիվների և հատուկ հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ ներկայացված չեն եղել): Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 7-ի N 937-Ն որոշման «Հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը հարկային մարմիններ ներկայացնելու» կարգի 1-ին հոդվածի 7-րդ կետի, սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող են կատարել նախկինում ներկայացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ճշգրտումներ (ներկայացնել ճշգրտված տեղեկություններ): Ելնելով վերը նշվածից, այդ հարկային հաշիվների և հատուկ հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները համարվում են սահմանված կարգով չներկայացված, հետևաբար համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43.1 հոդվածի, նշված հարկային հաշիվներում և հատուկ հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցման ենթակա չեն (ընկերության կողմից նշված ԱԱՀ-ի գումարները չեն հաշվանցվել):

05.12.2011թ-ին «ՀԳՆ» ՍՊԸ-ի կողմից դուրս գրված Ա0062443857 և Ա1749016889 հարկային հաշիվներում առանձնացված 745735 դրամ և 2420090 դրամ ԱԱՀ-ի գումարները ենթակա են սահմանված կարգով հաշվանցման և 2011թ-ի դեկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի հաշվարկով բյուջե վճարման ենթակա հարկից պակասեցման, քանի որ առկա են դուրս գրված հարկային հաշիվները, սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված տեղեկությունները և 2011թ-ի դեկտեմբեր ամսվա ընթացքում կատարված համապատասխան գումարների բանկային փոխանցումները, որոնք բավարարում են «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջներին (ընկերության կողմից նշված գումարները չեն հաշվանցվել):

Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43.1 հոդվածի չներյացրած կամ սխալ ներկայացված տեղեկությունների համար, տվյալ դեպքում թվով ութ չներկայացված տեղեկություն (8x5000դրամ), այդ թվում՝ 6-ը «Դորոժնիկ» ՍՊԸ-ի և 2-ը «ՀԳՆ» ՍՊԸ-ի վերաբերյալ, գանձման է առաջադրվել տուգանք ընդամենը 40000 դրամ:

<Լճոռի-Զրմուղկոյուղի> ՓԲԸ գանգատում մասնավորապես նշված է.

1. Ակտի 2-րդ կետի վերաբերյալ Ընկերության իրավական դիրքորոշումը.

ա. <Լճոռու և Ծիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում> վարկային ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության (ի դեմս ՀՀ Ֆինանսների նախարարության), KfW բանկի (այսուհետ Բանկ), <Լճոռի-Զրմուղկոյուղի> ՓԲԸ և Ընկերության միջև 04.05.2010թ. կնքված BMZ թիվ 2009_66_515 Համաձայնագրի հիման վրա:

Համաձայնագիրը կնքվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունների միջև ֆինանսական համագործակցության մասին 16.03.2010թ. համաձայնագրի, որի վերաբերյալ 08.06.2010թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է ԱԺՈՒ-211-Ն որոշումը:

Համաձայնագրի 1.3, 10.1, 10.3 կետերի դրույթների ուժով, ծրագրի կատարմանն ուղղված բոլոր վճարումները իրականացվում են առանց հարկերի կամ այլ ծախսերի պահման: Եթե օրենսդրության պահանջներով կամ այլ պատճառներով փոխառուն /Հայաստանի Հանրապետությունը/ պարտավոր է հարկել կամ կատարել պահումներ, ապա այդ գումարները պետք է վճարվեն փոխառուի կողմից:

Վերոնշյալ դրույթների ուժով ծագում է հետևյալ իրավական խնդիրը՝ Հարկային տեսչությունը /Հայաստանի Հանրապետության անուից հանդես գալով/ հարկային պարտավորության պահանջ է ներկայացնում Ընկերությանը, որի /Ծրագրի շրջանակներում/ իրականացված ֆինանսական վճարումների դիմաց հարկման ենթակա գումարները՝ համաձայն <2010 թվականի մարտի 16-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2009-2010 թվականների ֆինանսական համագործակցության մասին> համաձայնագրի, պետք է վճարի Հայաստանի Հանրապետությունը:

Փաստորեն, պարտավորության կատարման պահանջի իրավական հիմնավորվածության առումով, կարելի է արձանագրել, որ քննարկվող պարտավորության դեպքում ի հայտ է գալիս ՀՀ քաղ. օր-ի 429-րդ հոդվածով սահմանված իրավահարաբերությունը՝ Պարտատիրոջ և պարտապանի համընկնման դեպքում պարտավորությունը դադարում է:

բ. Լեռնային Ղարաբաղի հանրապետության, նրա քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների կարգավիճակը հանրահայտ է, թեկուզև ոչ դրոշակի իրավական ամրագրվածության պարագայում:

Փաստորեն, Հարկային տեսչությունն ստուգման ակտով հայտարարում է, թե ԼՂՀ-ն օտարերկրյա պետություն է, այն դեպքում, երբ ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև բացակայում է պետական սահմանը մաքսային հսկողությունը, անձանց մուտքի և ելքի թույլտվության համակարգի և փաստական և՛ իրավաբանական բացակայությունը:

Քննարկվող իրավահարաբերությունը կարգավորվում է հետևյալ իրավական ակտերի դրույթներով.

<Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի <բ> ենթակետի համաձայն՝ <ոչ ռեզիդենտ են համարվում օտարերկրյա պետությունում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները>:

<Դորոժնիկ> ՍՊԸ-ն ԼՂՀ-ում գրանցված իրավաբանական անձ է և Հարկային տեսչությունը սխալ մեկնաբանելով <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի <բ> կետի դրույթը՝ եզրակացրել է, որ <Դորոժնիկ> ՍՊԸ-ն օտարերկրյա պետությունում ստեղծված կազմակերպություն է: Իրականում, <Դորոժնիկ> ՍՊԸ-ն ստեղծվել է ՀՀ-ից դուրս, սակայն ոչ օտարերկրյա պետությունում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը միջազգային իրավունքի սուբյեկտ չէ և չի համապատասխանում օտարերկրյա պետություն իրավական բնորոշմանը:

ԼՂՀ-ում գրանցված կազմակերպությունը ԱԱՀ-ի մասով ներկայացնում է հատուկ հարկային հաշիվ, որի արդյունքում պատվիրատուն իր մոտ դուրս չի գրում <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա ինքնահաշիվ, հետևաբար չի դիտարկում ԼՂՀ-ում գրանցված կազմակերպությունը որպես ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձ, այլ դիտարկվում է որպես ՀՀ ռեզիդենտ: Հետևաբար, եթե կապալառու կազմակերպությունը համարվում է ՀՀ ոչ ռեզիդենտ, ապա սահմանված կարգով, <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի հիման վրա հաշվարկվում է ոչ ռեզիդենտի շահութահարկ, ինչպես նաև <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան դուրս գրված ինքնահաշիվի հիման վրա՝ ՍԱՀ: Ինքնահաշիվի <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի պահանջներով դուրս գրման պարտավորության ընդունումը փաստում է կապալառուի ՀՀ ոչ ռեզիդենտ հանդիսանալը: Սահմանված կարգով դուրս գրված հարկային /նաև հատուկ/ հաշիվների ընդունման փաստը, ինչպես նաև ինքնահաշիվի դուրս գրման պահանջի բացակայությունը /այդ թվում հարկային մարմնի կողմից/ ապացուցում են կապալառուի ՀՀ ռեզիդենտ հանդիսանալը:

Փաստորեն, Հարկային տեսչությունը կիրառում է կրկնակի չափորոշիչներ՝ մի հարկատեսակի կիրառման դեպքում <Դորոժնիկ> ՍՊԸ-ին դիտում է որպես ռեզիդենտ, այլ հարկատեսակով՝ ոչ ռեզիդենտ:

Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի <բ> ենթակետի դրույթը, առերևույթ կիրառելի չէ ԼՂՀ-ում ստեղծված կազմակերպության համար, սակայն եթե հարկային տեսչությունը ունի հակառակ կարծիք, ապա <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, 55-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի նորմերի դրույթների և <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի <գ> կետի 2-րդ պարբերության պահանջներով՝ նշված նորմի դրույթները պետք է կիրառել /մեկնաբանել/ հարկ վճարողի օգտին:

Ակտի 5-րդ կետի վերաբերյալ.

Վերը նկարագրված ընթացակարգով Ընկերությունը ստուգվող ժամանակահատվածում ստացել է ընդամենը 1731606061 դրամ, 346321212 դրամ ԱԱՀ 2077927273 դրամ ընդհանուր արժեքով հարկային (այդ թվում նաև հատուկ) հաշիվներ, որոնց դիմաց նախորդ կետում նշված կարգով կատարվել են վճարումներ և որոնցում ընդգրկված ԱԱՀ-ն <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով ենթակա էր հաշվանցման (դեբետագրման): Դա չի կատարվել Ընկերության կողմից:

Ընկերության կողմից, ըստ էության, վերը նշված հաշիվների վերաբերյալ ներկայացվել են պահանջվող տեղեկությունները: Պահպանված է <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի պահանջը: Ակտում նշված հանգամանքը, թե Ընկերության կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 7-ի թիվ 937-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջը, որևէ կերպ չի կարող ապացուցել հակառակը, թե չեն ներկայացվել պահանջվող տեղեկությունները:

Խնդրվում է ընդունել սույն կետում նշված հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի հաշվանցման /դեբետագրման/ Ընկերության իրավունքը:

2. Ակտի 1-ին կետի վերաբերյալ.

ՀՀ կառավարության 04.10.2012թ. թիվ 1250-Ա որոշմամբ սահմանված է, որ 2009-2011թթ. ՀՀ պետ. բյուջեից Ընկերությանը տրամադրված միջոցներն ամբողջությամբ ենթակա են ուղղման Ընկերության կանոնադրական կապիտալի համալրմանը: Նշված միջոցներից 408 մլն. դրամ Ընկերության կողմից դիտարկվել է որպես հարկվող շահույթի ավելացում, որը նշված որոշման ուժով ենթակա է հակադարձման: Այսինքն՝ Ընկերության, ստուգվող ժամանակահատվածի հարկվող շահույթը ենթակա է նվազեցման 408 մլն. դրամի չափով և որի արդյունքում չի առաջանա Ակտի 1-ին կետում արձանագրված լրացուցիչ հարկային պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է ստուգման ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Լոռի-ջրմուղկոյուղի> ՓԲԸ ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ստուգման ընթացքում պարզվել է, որ <Դորոժնիկ> ՍՊԸ-ին, իր կողմից Հայաստանի Հանրապետությունում մատուցված ծառայությունների դիմաց <Լոռի-ջրմուղկոյուղի> ՓԲԸ կողմից վճարվել է 1495681357 դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ <Դորոժնիկ> ՍՊԸ-ն որպես հարկ վճարող հաշվառված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, հետևապես համաձայն <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի <բ> ենթակետի, հանդիսացել է որպես ոչ ռեզիդենտ կազմակերպություն: Այսինքն, <Դորոժնիկ> ՍՊԸ-ին վճարված 1495681357 դրամի եկամուտը <Լոռի-ջրմուղկոյուղի> ՓԲԸ կողմից պետք է արտացոլվեր <Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված շահութահարկի ամփոփ հաշվարկ>-ում և սահմանված կարգով վճարվեր ոչ ռեզիդենտի շահութահարկ հետևյալ պատճառաբանությամբ:

<Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների համապատասխան Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում (հարկատու են) նաև ոչ ռեզիդենտները, որոնց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից (<Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 53-րդ հոդված) ստացվող հարկվող շահույթը (եկամուտը): Ընդ որում, <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ի մասի և 64-րդ հոդվածին համապատասխան ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ (վճարվող եկամտի ընդհանուր գումարից):

<Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. <Սույն օրենքի իմաստով՝

ա) ռեզիդենտ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված, կանոնները գրանցած) կազմակերպությունները և պայմանագրային ներդրումային ֆոնդերը, բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և սույն կետի <բ> ենթակետում նշված կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների.

բ) ոչ ռեզիդենտ են համարվում օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները>:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի <ա> ենթակետով սահմանված ՀՀ ռեզիդենտների բնորոշումը, այն է՝ ռեզիդենտ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված, կանոնները գրանցած) կազմակերպությունները, հետևապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գրանցված կազմակերպությունը դասվում է ոչ ռեզիդենտների շարքին և վերջինիս նկատմամբ նույնպես կիրառելի են <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքով սահմանված վերոգրյալ դրույթները:

Ինչ վերաբերում է դիմում-բողոքում բերած այն պնդմանը, որ հարկային տեսչությունը կիրառում է կրկնակի չափորոշիչներ՝ մի հարկատեսակի կիրառման դեպքում <Դորոժնիկ> ՍՊԸ-ին դիտում է որպես ռեզիդենտ, այլ հարկատեսակով՝ ոչ ռեզիդենտ, ապա այդ կապակցությամբ նշվեց հետևյալը:

Ստուգման ակտով շահութահարկի գծով լրացուցիչ պարտավորություններն առաջադրվել են ղեկավարվելով <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված հիմնարար դրույթով, համաձայն որի. <Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ վճարողների շրջանակը, շահութահարկի դրույքաչափերը հաշվարկման և վճարման կարգը>: Այսինքն, ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք լրացուցիչ պարտավորություններ առաջադրելիս հիմք են ընդունել այն հանգամանքը, որ յուրաքանչյուր հարկատեսակ իր իրավական կարգավորումն է ստանում տվյալ հարկատեսակի գործողության ոլորտը կարգավորող առանձին օրենքով:

Դիմում-բողոքում ստուգման ակտի 1-ին կետի վերաբերյալ ներկայացված փաստարկներն ըստ էության հիմնավոր չեն, քանի որ բողոքում հիշատակված իրավական նորմն ընդունվել է ստուգման ակտը կազմելուց հետո:

Դիմում-բողոքում ստուգման ակտի 5-րդ կետի վերաբերյալ ներկայացված փաստարկները նույնպես հիմնավոր չեն: Մասնավորապես, <Դորոժնիկ> ՍՊԸ-ի կողմից դուրս գրված հատուկ հարկային հաշիվների, ինչպես նաև <<ԳՇՆ> ՍՊԸ-ի կողմից դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները ներառվել են 2012թ-ի ապրիլի 12-ին և 13-ին ներկայացված ճշգրտված տեղեկանքներում (նախկինում այդ հարկային հաշիվների և հատուկ հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ ներկայացված չեն եղել):

<< կառավարության 2011թ. հուլիսի 7-ի N 937-Ն որոշմամբ հաստատված <<Հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը հարկային մարմիններ ներկայացնելու> կարգի 7-րդ կետի համաձայն, սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող են կատարել նախկինում ներկայացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ճշգրտումներ (ներկայացնել ճշգրտված տեղեկություններ): Ելնելով վերոգրյալից այդ հարկային հաշիվների և հատուկ հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները համարվում են սահմանված կարգով չներկայացված, հետևաբար համաձայն <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 43.1 հոդվածի, նշված հարկային հաշիվներում և հատուկ հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցման ենթակա չեն:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանձատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանձատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանձատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանձատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանձատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունները:

Գանձատարկման խորհրդի 2012թ. թվականի նոյեմբերի 5-ի եզրակացությունում մասնավորապես նշվել է.

1. 2009-2011 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից <Լոռի-ջրմուղկոյուղի> ՓԲԸ-ին տրամադրված գումարների բնույթը պարզելու նպատակով <Լոռի-ջրմուղկոյուղի> ՓԲԸ-ի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ-ի 2012 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ

1002542 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատի քննարկումը՝ ստուգման ակտի 1-ին կետի մասով, հետաձգել:

2. <Լոռի-ջրմուղկոյուղի> ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիմում-գանգատը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ-ի 2012 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1002542 ստուգման ակտի 2-րդ և 5-րդ կետերի մասով, համարել ոչ հիմնավոր և այդ կետերի մասով հավանություն տալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագծին:

Հաշվի առնելով, որ ստուգման ակտի 1-ին կետի մասով ներկայացված դիմում-գանգատի քննարկումը հետաձգվել է, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 2012թ. թվականի նոյեմբերի 9-ին ընդունվել է թիվ 36 որոշումը՝ ստուգման ակտի դեմ բերված դիմում-գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետը 15 օրով երկարաձգելու վերաբերյալ:

Գանգատարկման խորհուրդը, 2012թ. թվականի նոյեմբերի 26-ի նիստում քննության առնելով ստուգման ակտի 1-ին կետի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը տվել է եզրակացություն, որում մասնավորապես նշվել է.

<Լոռի-ջրմուղկոյուղի> ՓԲԸ-ի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ-ի 2012 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1002542 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը, ստուգման ակտի 1-ին կետի մասով, համարել հիմնավոր, իսկ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագիծը՝ ոչ հիմնավոր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 4-ի <Լոռի-ջրմուղկոյուղի, <Շիրակ-ջրմուղկոյուղի> և <Նոր Ակունք> փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին> թիվ 1250-Ա որոշմամբ Գերմանիայի զարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու (Վանաձորի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի՝ 1-ին և 2-րդ փուլերի շրջանակներում 2010 և 2011 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության համաֆինանսավորմամբ հատկացված գումարը, որպես պետական բաժնեմաս, ներդրվել է <Լոռի-ջրմուղկոյուղի> ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում:

Հանձնաժողովը, վերանայելով ստուգման ակտի դեմ ընկերության կողմից ներկայացված դիմում-գանգատում բերված փաստարկները, սույն գործին առնչվող ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի վերոգրյալ եզրակացությունները, գտնում է, որ դիմում-գանգատը ստուգման ակտի 1-ին կետի մասով ենթակա է բավարարման, իսկ ստուգման ակտի 2-րդ և 5-րդ կետերի մասով՝ մերժման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 03.10.2012թ. թիվ 1002542 ստուգման ակտի 1-ին կետը, իսկ ստուգման ակտի 2-րդ և 5-րդ կետերը թողնել անփոփոխ:

Որոշումը կատարվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատերը անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:



[Handwritten signature]

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ